

**Աշխարհագրություն – 2020թ. մարզային (քաղաքային) փուլ**  
**Պատասխաններ**  
**/ գնահատման քայլը՝ 0,25 միավոր /**  
**11 – 12 –րդ դասարաններ**

1. Տարածականություն, համալիրություն, կոնկրետություն, համընդհանրություն:
2. Արդյունաբերության տարածքային կազմակերպումը ձեռնարկությունների տարածքային զուգակցումն է՝ հիմնված բնական, նյութական և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա: Դրա իրականացման ձևերից են.
  - ա) արդյունաբերական կետեր – բնակավայրում գործում է մեկ արդյունաբերական ձեռնարկություն
  - բ) արդյունաբերական կենտրոններ – գործում են մի քանի արդյունաբերական ձեռնարկություններ
  - գ) արդյունաբերական հանգույց – իրարից ոչ հեռու արդյունաբերական ձեռնարկությունների խումբ
  - դ) արդյունաբերական շրջան – արդյունաբերական կենտրոնների և հանգույցների կուտակում մեկ ընդարձակ տարածքում:
3. Զարգացող որոշ երկրներ՝ Մեքսիկան, Հնդկաստանը և Չինաստանը 1960 – ական թվականներից սկսեցին լայնորեն կիրառել գյուղատնտեսական գիտության նվաճումները և, ստանալով բարձր բերք, կարողացան հացահատիկով ապահովել սեփական բնակչությանը: Այս երևույթը ստացավ «Կանաչ հեղափոխություն» անվանումը: Նրա երկրորդ փուլը տեղի ունեցավ զարգացած երկրներում, որն ստացավ «Կենսատեխնոլոգիական հեղափոխություն» անվանումը:
4. 1. սխալ է      2. սխալ է      3. ճիշտ է      4. սխալ է      5. ճիշտ է      6. սխալ է:
5. ա) Բնական պայմաններն աշխարհագրական միջավայրի այն տարրերի ամբողջությունն են, որոնք թողնում են որոշակի ազդեցություն հասարակության կյանքի տարբեր կողմերի, մասնավորապես տնտեսության վրա: Օրինակ, բարձր լեռնային կամ հարթավայրային ռելիեֆը, հողի բազմամյա սառցույթը, սառցադաշտը, ձնահյուսը, տոթ ու շոգ ամառը, երկարաշունչ ձմեռը և այլն:  
բ) Բնության այն տարրերն ու երևույթները, որոնք օգտագործվում են հասարակական արտադրության պրոցեսում՝ մարդու նյութական և մշակութային պահանջների բավարարման համար, կոչվում են բնական ռեսուրսներ: Օրինակ, հանքային, հողային, ջրային, անտառային, էներգետիկ, համաշխարհային օվկիանոսի, կլիմայական և այլ ռեսուրսներ:
6. Դեկտեմբերի 22 – ին՝  $90^\circ - (40^\circ + 23,5^\circ) = 26,5^\circ$   
հունիսի 22 – ին՝  $90^\circ - (40^\circ - 23,5^\circ) = 73,5^\circ$   
մարտի 21 – ին և սեպտեմբերի 23 – ին՝  $90^\circ - 40^\circ = 50^\circ$
7. 3. պրոդուցենտներ
8. ՅՈՒՆԵՊ
9. 6 տոննա : 1,5 = 4 տոննա նավթ
10. Հիմնական կլիմայական գոտիներում ամբողջ տարի գերիշխում է մեկ տիպի (համաձայն) օդային զանգված, իսկ անցումայինում՝ հարևան 2 գոտիների օդային զանգվածները (հյուսիսային կիսագնդում՝ ձմռանը իրենից հյուսիս, ամռանը՝ իրենից հարավ գտնվող գոտիների օդային զանգվածները, իսկ հարավային կիսագնդում՝ հակառակը): Օրինակ, արևադարձային և բարեխառն գոտիներում ամբողջ տարի գերիշխում են համապատասխանաբար արևադարձային և բարեխառն օդային զանգվածները: Մերձարևադարձային գոտիներում (հյուսիսային և հարավային) ամռանը տիրապետում են արևադարձային, իսկ ձմռանը՝ բարեխառն օդային զանգվածները: Մերձհասարակածային գոտիներում (հս. և հվ.) ամռանը տիրապետում են հասարակածային, իսկ ձմռանը՝ արևադարձային օդային զանգվածները:

11. Հրագրանի ակունքի բարձրությունը 1900 մ է, իսկ գետաբերանինը՝ 825 մ: Գետի երկարությունը 141 կմ է: Գետի անկումը կլինի՝  $1900\text{մ} - 825\text{մ} = 1075\text{ մ}$   
Գետի թեքությունը կլինի՝  $1075\text{մ} : 141\text{կմ} = 7,6\text{ մ/ կմ}$

12. 1. ճիշտ է      2. սխալ է      3. ճիշտ է      4. ճիշտ է      5. ճիշտ է      6. սխալ է

13. 1, 4, 6, 8,

14. 2. ծծմբային միացությունների արտանետումները

15. 1. կարտոֆիլի մշակությունը: